

ԼՐԱՏՈՒ

ՌՈԼՖ ՀՈՍՖԵԼԴ (1948-2021)

2021 թ. հուլիսի 23-ին կյանքից հեռացավ Պոտսդամում Լեփսիուսի տան տնօրեն, մեծավաստակ պատմաբան, ցեղասպանագետ, հրապարակախոս և հրատարակիչ Ռոլֆ Հոսֆելդը: Նա ուսանել է գերմանիստիկա, քաղաքագիտություն, նոր շրջանի պատմություն և փիլիսոփայություն՝ նախ Մայնի Ֆրանկֆուրտում, այնուհետև Արևմտյան Բեռլինում, որտեղ 1976 թ. ավարտել է մագիստրոսական կրթությունը, պաշտպանել ատենախոսություն և ստացել փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Դասավանդել է Բեռլինի Ազատ համալսարանում, եղել նաև «Merian» ամսագրի պատասխանատու խմբագիր և Համբուրգի «Die Woche» շաբաթաթերթի գրական բաժնի վարիչ: 1982 թ. Ռ. Հոսֆելդը դարձել է Գերմանիայի գրողների միության անդամ, 2002 թ.՝ արվեստի և քաղաքականության «Peter-Weiss» հիմնադրամի վարչության անդամ:

Ռ. Հոսֆելդը մեծ վաստակ ունի գիտության, գրականության և հրապարակախոսության ասպարեզներում: Նրա գրչին են պատկանում Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելի, Կուրտ Տիխոլսկու, Հայնրիխ Հայնեի, Կարլ Մարքսի քննական կենսագրությունները (որոնցից վերջինը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով և արժանացել Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի՝ 2010 թ. «Քաղաքական գիրք» մրցանակին), Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության պատմությունը, գերմանական ժողովրդի 1815-2007 թթ. պատմությանը նվիրված քառահատոր հրատարակությունը և բազմաթիվ այլ ուսումնասիրություններ:

Ծանոթանալով հայ ժողովրդի նոր շրջանի և մասնավորապես Հայոց ցեղասպանության պատմությանը՝ Ռ. Հոսֆելդն իր եռանդն ու ջանքերն ուղղեց այդ հանցագործության հանրայնացման, ճանաչման և դատապարտման նպատակին: 2005 թ. հրատարակված «Նեմեսիսի օպերացիան. Թուրքիան, Գերմանիան և Հայոց ցեղասպանությունը» արժեքավոր աշխատությունն ազդարարեց նրա մուտքը հայագիտություն և ցեղասպանագիտություն, որն այդուհետև նշանավորվեց այդ ոլորտներին վերաբերող բազում արժեքավոր հրապարակումներով: Հայոց ցեղասպանությանն առնչվող՝ նրա հեղինակությամբ, համահեղինակությամբ և խմբագրությամբ թե՛ գերմաներեն և թե՛ անգլերեն լույս տեսած բազմաթիվ աշխատությունները, որպես կանոն, լայնորեն լուսաբանվում էին Գերմանիայի և այլ երկրների լրատվամիջոցներում:

Մեծ արձագանք և հասարակական հնչեղություն ձեռք բերեց, մասնավոր

րապետ, Ռ. Հոսֆելդի՝ 2015 թ. հրատարակած «Մահ անապատում. Հայոց ցեղասպանությունը» մենագրությունը: Հենվելով Հայոց ցեղասպանությանը վերաբերող ոչ հայալեզու առավել կարևոր և մասամբ դեռևս գիտական շրջանառության մեջ չդրված սկզբնաղբյուրների վրա՝ նա հաջորդականությամբ ներկայացնում է ոչ միայն բուն ցեղասպանության պատմությունը, այլև դրա նախապատմությունը, փաստարկում է ցեղասպանության ծրագրայնությունը և ի ցույց դնում օսմանյան վարչակարգերի դրսևորած հետևողականությունը դրա իրականացման ասպարեզում:

Ռ. Հոսֆելդի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված բոլոր հրապարակումներն աչքի են ընկնում այդ թեմայի լուսաբանման հստակությամբ և հետազոտական նյութի քննության անաչառությամբ: Պատմական իրողությունների և գործընթացների վերաբերյալ նրա գնահատականներում բացակայում են արևմտյան պատմագրության մեջ հաճախակի ի հայտ եկող, այսպես կոչված, «հավասարակշռողական» մոտեցումները, երբ փորձ է արվում «եթե...», «պա...», «չնայած...», «բայց և այնպես...» և համանման ձևակերպումներով մեղքը և պատասխանատվությունը տարրալուծել դահճի և գոհի միջև:

Մեծ գիտնականին, սակայն, իր գիտական գործունեությանը զուգահեռ, վիճակված էր նաև դեկավարման և կազմակերպական բացառիկ կարևոր մի առաքելություն: 2011 թվականից, երբ նա ընտրվեց Լեփսիուսի տան տնօրեն, այդ հաստատությունը ծավալեց ակտիվ և արգասաբեր գործունեություն՝ դառնալով ոչ միայն Հայոց ցեղասպանության քննական ուսումնասիրության և լուսաբանման, այլև առհասարակ ցեղասպանագիտության ուրույն կենտրոն: Որպես այդպիսին՝ այն կարճ ժամանակում ոչ միայն Գերմանիայում, այլև Եվրոպայում դարձավ եզակի մի հաստատություն, քանի որ, զբաղվելով ցեղասպանագիտությամբ, իր գործունեության առանցքը դարձրեց Հայոց ցեղասպանությունը՝ այն համարելով, ինչպես Ռ. Հոսֆելդն էր նշում, Լեփսիուսի տանը և նրա հետ համագործակցությամբ իրականացվող ցեղասպանագիտական և ազգային փոքրամասնությունների հանդեպ տարվող քաղաքականության համեմատական հետազոտությունների ելակետ:

Խորապես գնահատելի է նաև, որ Լեփսիուսի տունը՝ Ռ. Հոսֆելդի ղեկավարությամբ չսահմանափակվելով սուկ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների քննական ուսումնասիրությամբ, մշտապես իր գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների շարքում է դասել նաև հայոց պատմությանը և մշակույթին վերաբերող տարաբնույթ հարցերի լուսաբանումը և, ըստ այդմ դարձել հայագիտական ծանրակշիռ և ինքնատիպ կենտրոն:

Դժվար է գտնել ցեղասպանագիտական և հայագիտական որևէ հաստատություն, որն իր օրակարգի հագեցվածությամբ կարող էր համեմատվել նրա կողմից ղեկավարվող Լեփսիուսի տան հետ: Յուրաքանչյուր տարի այնտեղ իրականացվող մեծաթիվ գիտաժողովներով, գիտական հրապարակումներով, սեմինարներով, դասախոսություններով և բազմազան այլ միջո-

ցառումներով հաստատության երախտավոր տնօրենը շարունակ փաստում էր, թե որքան շատ բան կարելի է անել, երբ համատեղվում են կամքը, նվիրումն ու արհեստավարժությունը: Ոչ պակաս ուշագրավ է և գնահատելի, որ նա այդ բազմաթիվ ձեռնարկումների պարագայում ի հայտ եկող նյութական արգելքները հաղթահարելու և միաժամանակ դրանց առավելագույն հրապարակայնություն հաղորդելու համար դրանք, որպես կանոն, իրականացնում էր գիտական և մշակութային հայտնի այլ կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ:

Ռ. Հոսֆելդն առանձնապես կարևորում էր նաև Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությունը, որն արդյունավորվեց 2017 թ. Լեփսիուսի տան և ԵՊՀ-ի միջև գիտակրթական և մշակութային համագործակցության վերաբերյալ պայմանագրի կնքումով:

Մեծ է կորուստը, որ Ռուֆ Հոսֆելդի անժամանակ մահը պատճառեց ցեղասպանագիտությանը, հայագիտությանը և պատմագիտությանը, քանի որ նա չհասցրեց կյանքի կոչել բազմաթիվ ծրագրեր և գաղափարներ: Այնուհանդերձ, ինչպես նրա ծանրակշիռ վաստակը, այնպես էլ պայծառ հիշատակը մշտապես շարունակելու են ուղեկցել մեզ:

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ